

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ մը 8 ՄԷՃ.
» Գաւառաց 10 ՄԷՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄԷՃ.
» Գաւառաց 5 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
չանուցման տողը մէկ անգամի հաւ.
ժար 3 դուրուշ, երկու անգամի հաւ.
ժար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ ստակարկութիւն կը լայն:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 21 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ նոր նախարարութիւնը
կազմուեցաւ, և անդամաց անունները
ընն արդէն հետագայի ծանոց:

Բայց այս նախարարութիւնն ան-
շուշտ առժամանակեայ է, քանզի
փարիզէն եկած հեռագիր մը կը ծա-
նուցանէ թէ՛ ներկայ նախարարու-
թեան դիմադրելու՝ այսինքն զայն
տապալելու նպատակաւ Օրլէանեան
կուսակցութիւնը Պոնապարթեանց
հետ կը միանայ:

Այս դարձուածներէն կ'տեսնուի
որ Գաղղիոյ ներկայ ազգային ժողովոյ
մէջ անհնար պիտի ըլլայ մեծամասնու-
թիւն մը կարգել, որոյ վրայ կարենայ
յեղադրել կառավարութիւնը: Գիտնալու
արժանի է թէ՛ Մարք—Մահան մարա-
շախան ինչ որոշուած պիտի տայ՝ բան
մը հիմնելու բոլորովին անկարող եւ
բեւտիւնական ժողովոյ մը նկատ-
մամբ: Այս ստոյգ է որ մտքերու մէջ
տիրող կարծիքը՝ ներկայ երեսփո-
խանութիւնը լուծել և ընդհանուր
ընտրութիւններ ընել է, ընտրութիւն-
ներ՝ որք միայն կարելի պիտի ընեն
վերադարձ ժողովարանին մէջ որ և է
կուսակցութեան մեծամասնութեան
մը կազմութիւնը:

Այս կարծիքն այնչափ տիրած է,
որ Մարաշախան—Մարաշախան բերա-
նըն համարուած Բրէս քաղաքին ան-
գամ դեռ քանի մ'որ առաջ կըսէր,
«Առանց յեղափոխական դործիք
մ'ըլլալու կը պահանջէր որ կամ
եւթմասնայ նախագահութեան միջո-
ցին պէտք եղած օրէնքները հաս-
տատուին, կամ՝ ներկայ երեսփոխա-
նութիւնը լուծուի: Իրենտիտական
մեծամասնութիւնը՝ միապետութիւնը
վերադարձնելու ջանքեր ըրաւ, բայց
ի դերեւ ելան. ուստի եթէ եւթմասն
եայ նախագահութիւնն ալ չկրնայ
հաստատ պահել, լուծուելէ դատ ու-
րիչ բան չ'մնար իրեն»:

Օրլէանեանց կուսակցի թուրքալ
Տը փարի քաղաքին ալ, որ մինչև ցարդ
երեսփոխանութիւնը լուծելու գաղա-
փարին դէմ կը մարտնչէր, նոր նա-
խարարութեան առթիւ այսպէս կը
խօսի:

«Նոր նախարարութիւնը քանի մը
շաբաթ միայն կրնայ տևել. իւր նը-
պատակը պիտի ըլլայ երեսփոխանու-
թեան լուծումը՝ պարտաւորել և
հաշտարար քաղաքականութեան մը
հետեւիլ: Իսկ եթէ որ և է կուսակ-
ցութեան յարի, պիտի տեսնէ որ ներ-
կայ երեսփոխանութեան մէջ մեծա-
մասնութիւն չէ մնացած. ոչ ալ ա-
կողմէն ինչպէս կուզէր Պ. Տը Պոլի,
ոչ միջին մասերէն, ինչպէս կը փա-

փաքէր Պ. Կուլար, և ոչ ճախարի-
մէն մեծամասնութիւն մը կազմել ան-
հրնար է:

Ահա երեսփոխանութեան լուծ-
մամբ միայն Գաղղիոյ նախարարու-
թիւնը պիտի կրնայ ազատիլ այն անել
չաւղէն, ուր կ'առաջնորդէր Պոլի
քաղաքականութիւնը:

Բրուսիոյ կառավարութիւնն եւ-
րեսփոխանական ժողովին մէջ հար-
ւածի մը հանդիպեցաւ, որոյ նմանը
քիչ տեսնուած է: Հասարակային չի-
նութեանց նախարարն օրինաց ծրա-
դիր մը ներկայացուցած էր, որով
տէրութեան երաշխաւորութիւնը կը
խնդրէր Պէրլինի հիւսիսային երկա-
թագից ընկերութեան մէկ փոխա-
ռութեանը: Այս ծրագիրն ընդունել
տալու համար Բրուսիոյ նախարարու-
թիւնն ամեն ճիշդ թափեց, բայց չը
կրցաւ յաջողիլ: Յայտնի է որ երկա-
թագից ընկերութիւնները շատ ան-
գամ իրենց դրամագլուխը շուայա-
բար կ'ապաւնէ, և յետոյ տէրու-
թեան դիմելով անոր երաշխաւորու-
թիւնը կը խնդրեն փոխառութեան
համար: Այս կարգէն էր նաեւ Պէր-
լինի հիւսիսային երկաթագիցից ըն-
կերութեան առաջարկութիւնը:

Այս առթիւ Պ. Լաւաքէր երեսփո-
խանն յայտնութիւններ ըրաւ այն
դայնակիցի արարմանց վրայ, որոյ
չնորհիւ երկաթագից արտօնութիւ-
նը արուած և ընկերութեան դրա-
մագլուխը դործածուած էր, յայտ-
նութիւններ՝ որք երեսփոխանութեան
մեծամասնութիւնը կառավարութեան
ծրագրին դէմ դարձուցին:

Աւտրո—Հունգարական նախա-
րարաց գլուխ Անտրասի կոմսը խոր-
հրդարանին երեսփոխան յանձնաժո-
ղովին մէջ ապահովիլ յայտարարու-
թիւններ ըրած էր Եւրոպիոյ խաղա-
ղութեան նկատմամբ: Բանի մ'որ վեր-
ջը նայն յանձնաժողովը զինուորական
ծախուց դուրսըն զրաջ վիճաբանե-
լով խնայութիւններ ընել կուզէր:
Անտրասի կոմսը պատերազմական դոր-
ծոյ նախարարին օգնութեան հա-
տաւ, թէպէտ և իւր խաղաղութեան
նպատակաւ յայտարարութիւններէն
ետեւ դիւրին բան չէր զինուորական
մեծագումար ծախուց պէտքը հա-
տատել: Եւրոպայի ընդհանուր վի-
ճակն աչքէ անցունելով ծանոց թէ
մեծ հաւանականութիւն կայ խաղա-
ղութեան անվտանգ մնալուն, սա-
կայն ոչ ոք կրնար ճշդիւ գիտնալ թէ
այս խաղաղ վիճակն ո՞րչափ պիտի տե-
ւէ: Հետեւորար Աւտրո—Հունգա-
րական պետութեան զինուորական
զօրութեան պահպանութիւնն անհը-
րաժեշտ դատեց:

«Որչափ որ, ըստ, խաղաղու-
թեան հաստատուն մնալուն կարեւոր

նշաններ կան, պատերազմի հաւա-
նականութիւնն ալ մոռնալու չէ: Տե-
րութեան մը զինուորական զօրութիւ-
նըն որչափ պատկառելի ըլլայ, այն-
չափ ալ պատերազմի ժամանակ նը-
պատաւոր դրից մէջ կը կըգտնուի:
Ըստ պարագային, չէզոք կը մնայ,
կամ յաջողութեան աւելի յոյս տը-
ւող տէրութեան մը հետ կը դաշ-
նակցի: Չինուորական ծառայութիւ-
նը բոլոր ժողովրդեան համար պար-
տաւորիչ ընելու և զինուորներն եւ
ռամեայ պայմանաժամաւ դրոշակի
ներքեւ պահելու դրութիւնը՝ ներկայ
ժամանակին մէջ զինուորական զօրու-
թեան հիմն է: Ո՞ր տէրութիւն որ
այս երկու սկզբունքէն խոտորի, պէտք
եղած ժամանակ յաղթութիւն տանե-
լու անկարող կը գտնուի: Չինուորա-
կան ծախուց մէջ խնայութեանց սահ-
մանն այս խորհրդածութիւնները պի-
տի ըլլան: Այս խնդիրն ոչ միայն պա-
տերազմական դործոց նախարարին՝
այլ և արտաքին դործոց նախարա-
րին կը վերաբերի, քանզի տե-
րութեան մը քաղաքական պատիւն
իւր զինուորական զօրութեան համե-
մատութեամբ է: Կը պնդեմ ուրե-
մէն որ շատ մը զինուորներ իրենց
հայրենիքը դարձնելու պարտաւորե-
լով՝ մեր զինուորական զօրութիւնը չը
խանգարի»:

Անտրասի կոմսն առանց իւր նախ-
կին յայտարարութիւններն ետ առ-
նելու, խաղաղութեան հաստատ մը-
նալուն վրայ առաջուան չափ ապա-
հովութիւն չկրցաւ առլ:

Խաղաղութեան հաստատ մնալու
խնդիրն Անգլիոյ խորհրդարանին մէջ
ալ յուզուեցաւ: Լորտ Ռուսէլ ար-
տաքին դործոց նախարար Լորտ Տէր-
պլի հարցուց թէ խաղաղութեան վը-
տանգ մը կայ, և թէ Անգլիոյ կա-
ռավարութիւնն իւր ազդեցութիւնն
ի դործ պիտի գնէ՝ խաղաղութիւնը
վերագրող տէրութեան մը դէմ:

Լորտ Տէրպլի առաջին խնդրոյն
նկատմամբ այսպէս պատասխանեց.

«Արտաքին դործոց նախարարու-
թեան հաստած թղթակցութեանց նա-
յերով այս վայրկեանի խաղաղութեան
բնաւ վտանգ մը չկայ: Բայց եթէ
տակէ քանի մը տարուան համար դու-
շակութիւններ ընելու ելնեմ, ան-
ժըլտուելի է որ մեծ անխոհմտութիւն
մ'ըլլած պիտի ըլլամ»:

Երկրորդ խնդրոյն նկատմամբ բա-
ցորոշ կերպիւ ըսաւ.

«Տարակցայ չկայ որ առանց մեղի
չ'վերաբերած կուրենքու մէջ նետ-
ուելու, խաղաղութիւնը պահպանե-
լու համար բնաւ ջանք չպիտի խնա-
յենք»:

Ասկէ կը տեսնուի որ Պ. Տէրպլե-
յի և իւր պաշտօնակիցք Պ. Կլաւտի-
նի անմիջամտական քաղաքականու-

թեան չպիտի հետեւին, և Անգլիոյ
տէրութիւնը մեկուսացեալ դիւրի
մէջ չպիտի պահեն:

Ռուսիոյ կայսրն Անգլիոյ թագու-
հայն շքեղ հիւրընկալութիւնը վա-
յելեց, և մեծ ընդունելութիւն դը-
տաւ Անգլիոյ մէջ, ուր իւր դասեր
և փեսային՝ Էտինսբուրիի դքսուհայն
և դուքսին՝ այցելութեան գնացած
էր: Կըստին թէ քանի մ'ամսէն թա-
գուհին ալ Բեդֆորդսթըրի պիտի եր-
թայ ի վոլստադարէ այցելութիւն
Ալքսանդր կայսր: Տարակցայ չկայ
որ այս այցելութիւններն ուժեղապա-
յութիւններն ալ խաղաղութեան դը-
րաւականներ են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ 28 մայիս

Այսօր Սերմիոյ Միլան իշխանը Բու-
մանիոյ հետեւողորայ 8 թիւ դուռնի
գլուխ անուանեցաւ: Այս արարողութիւ-
նը զօրաց դուռնեան առջև կատարուե-
լով, անհուն խանդ զրգուց թէ՛ դօրաց
և թէ՛ ժողովրդեան մէջ:

Վիեննա 28 մայիս

Օսմանեան արժէքները միայն կը փըն-
տըռուին:

Երեւոյթներուն նայելով, հարաւա-
յին Սլավոն մէջ յուզումներ մը կը տես-
նուի Հունգարիոյ դէմ:

Փարիզ 29 մայիս

Ձրոյց կը պատրի թէ Գերմանացի իշ-
խանագուն մ'Սլաւիոյ դահուն ընտրելի
պիտի առաջարկուի:

Պէրլին 29 մայիս

Կորչաքոմ իշխանը հրաւեր դրեց Եւ-
րոպական կառավարութեանց, որ պատե-
րազմի ժամանակ ազգաց իրաւանց վե-
րաբերեալ խնդրոց և մասնաւորապէս պա-
տերազմական դերեաց ինչ կերպիւ նայ-
ւելու խնդրոյն վրայ համաձայնութիւն մը
յուրաքանչեւ համար դեպքումս զօր-
մը դուրսբերելու: Այս հրաւերն ընդունուե-
լով՝ դեպքումս զօրմը յուլիս 15ին Պրիւ-
սիէ պիտի գումարի:

Փարիզ 29 մայիս

«Հալապի թղթակցութիւն» քաղաքը
Պէրլինի կառավարական թերթերուն վեր-
ջին յօդուածոց նկատմամբ կըսէ թէ զար-
մանաց արժանի են, որովհետեւ Գաղղիա
խաղաղութիւնը վրդովեալ և Պէրլին վը-
րայ յարձակելու զինուորութեան հե-
ռի է:

Երկրին մէջ Պոնապարթեանց դէմադր-
ժում մը կը նշմարուի:

Հուլի 29 մայիս

Ֆալշինէլի կարդինալը կաթոլիկա-
հար մեռաւ:

Պելրուտ 29 մայիս

Միլան իշխանը մեր քաղաքը վերադար-
ձած ժամանակ հանդիսիւ ընդունուեցաւ:

Պ. Մակագլինովիին իրիւ Սերմիոյ
դեսպանական դործակատար Կ. Պոլիս
երթայն իրիւ պաշտօնական կը ծանուց-
ուի:

Վիեննա 30 մայիս

Սլաւիոյ դահուն դերմանական

ընտրելի մեծագույնությունը լուրջ փա-
րիկի լրացումը մեկ հնարքն է, և բնաւ կա-
րեւորութիւնն չունի:

Ֆարիկ 50 մայիս.

Երբ նախարարութիւնը պաշտպանու-
ղական զինք մը բռնած է: Պ. Լեւոնի
Ռօշին ընտրութիւնը վաւերացաւ:

Երբ 50 մայիս.

Այժմ հասնելի դորձաւորաց Կողմի
աշխատութեանց նոր դադարումներ կը
ծանուցուին:

Տարեկան 50 մայիս
Ռուսիոյ կայսրուհին յունիս 14ին հոս
կըստպատուի:

Ֆարիկ 50 մայիս.

Ազգային ժողովին աշխուրդեան եւ
ձախակողմեան կեդրոններն օր քան օր
իրարու մօտենալու կը ձգտին, և աս
երկու կուսակցութեանց մէջ համաձայ-
նութիւնն ապահովեալ է:

Ֆարիկ 50 մայիս իրիկուն.

Ազգային ժողովի մէջ խնդրոյ կարգը որո-
շեալ միայն երկար և ջերմ վիճաբանութիւն
մ'ըլլալէ ետեւ, աշխուրդեանք առաջարկե-
ցին նախ քաղաքապետական խորհրդոյ
ընտրութեան վերաբերեալ օրէնքը վիճա-
բանութեան դնել. այս առաջարկութիւն-
նը ձախակողմեան կեդրոնին սատարի
ընդդիմութեան հակառակ ընդունուեցաւ:
նախ:

Ասիկա կը հասկցուի որ աշխուրդեանց
ամեն խմբակներէն Կողմուած հին մե-
ծամասնութիւնն անեղծ մնացած է: Այս
վիճաբանութեանց ժամանակ կուսակցա-
րութիւնը բնաւ կարծիք չյայտնեց:

Վիկենտ 51 մայիս

Եւրոպէի Բրէս Լիար լրագիրը խափու
կը բողոքէ Կ. Պօլսէն քաղաքը այն հե-
ռադրաց դէմ, որը Օսմ. կառավարու-
թեան վրայ շարավառ լուրեր կուտան:

Պէրլին 51 մայիս.

Պիսմարք Ելխանը վարդին դնաց:
Մատիս 51 մայիս.
Գերմանական ընտրութեան լուրը
վարձապետ (պոստ տէն) մ'է, զոր փար-
լոսեանք՝ հանրապետական Գաղղիայէն
օգնութիւն մը չյուսալով յառաջ կը նե-
սեն:

Դիւ Եօրք 50 մայիս.

Պ. Ռօշօր և իր փախստեան ընկեր-
ները մեր քաղաքը հասան:
Երբ 1 յունիս.

Օսմ. Բօնա. 47 7/16

Փոխ. 1863 —

» 1869 54 3 4

» 1871 64 3/4

» 1872 82 1/4

Անգլ. Բօնա. 92 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Բրիդերնտի կուսակալութեան
Գարու քէհեաթի Բիֆաթ Էֆէնտին
Ռատիկանութեան նախարարի Մուա-
վին անուանեցաւ:

Փոքր Ասիոյ սովատան ժողովը
դոյն օգնութեան յանձնաժողովին
հրատարակած տեղեկութիւններէն
կը հասկցուի որ մինչև ցարդ մայրա-
քաղաքին մէջ հաւաքուած դրամա-
կան օգնութեանց դումարը 12,114
լիրա և 97 զրշ եղած է:

Գաւառներէն ալ հետզհետէ հան-
դանակութեանց դումարներ կը հաս-
նին Կ. Պօլս:

Տնտեսականութեան նախարարին մէկ
հրամանագիրը կը պատուիրէ հասա-
րակային հաստատութեանց, այն է
թատրոններուն, երաժշտական սրճա-
րաններուն և այլոց որ կէս դիշե-
րուն դոյնուին: Այս հրամանին հա-
կառակ վարուող հաստատութիւնք
նախկինութեան կողմէ պիտի դոյ-
նուին և ծանր տուգանաց ենթարկին:

Ռուիչ հրամանագրով մ'ալ քաղ-
դի խաղերը կարգելու: Երբորդով
մ'ալ երաժշտական սրճարանաց մէջ
ծառայող սպասուհիները ճանքել
կը հրամայէ:

Ռատիկանութիւնը 200 լիրա վարձք
կը խոստանայ այն մարդուն՝ որ Լոյսի
չողեանաւոյ դորձակատար Պ. Նիքո-
լին սպաննող Ռատովից անուն խրո-
ւաթը բռնէ կամ անոր ուր ըլլալը
ծանուցանելով բռնել տայ: Ասիկա
զատ, վսեմ Հիւանի փաշան և Դա-
լաթիոյ Գայմուդամ Գաղաղեան Յա-
կըր Էֆէնտին ամեն միջոց ձեռք ա-

ռած են ոճրագործը դանելու հա-
մար: Հիւալատոսարաններն ալ իրենց
կողմէ ամեն դիւրութիւն տուած են
Ռատիկանութեան, որպէս զի օտար
հպատակաց կասկածելի տուները մը ա-
նելով խուղարկութիւն ընէ:

Կրուի թէ Պ. Նիքոլի մեռնելու
ատենը 500 լիրա կտակեր է, որպէս
զի եթէ զինքը զարնող ոճրագործը
բռնուելով մահուան կամ ցկեանս
չլիցայակալ աշխատութեան դա-
տապարտուի, անոր ընտանեացը
տրուի:

Պ. Շմիտ Գերմանացւոյն որդւոյն
մահուանն անխոհեմութեամբ պատ-
ճառ եղող Գերմանացին՝ սրտին կը-
կիծէն ու դողէն խեղք կորնցուցա-
ծի պէս ըլլալով, իր պաշտօնէն ճան-
րուեցաւ և Գերմանիա պիտի ղըր-
կուի:

Լէվրնի ձերբաւրար կը ծա-
նուցանէ թէ Գարագեղի նոր երկաթ-
եայ կամարը շինող ընկերութեան
և Բ. Դրան մէջ ծագած անհամաձայ-
նութիւնը կարգադրուելով, կամար-
չին չինութիւնն աւարտելու ձեռնար-
կուեր է, և կը յուսացուի որ յառա-
ջիկայ յունվար ամսոյ մէջ իր տեղը
կը դրուի:

Ծովային գործոց նախարար Վը-
սեմ. Ահմետ փաշան Սաքիտ անու-
նով չորս փոքր շոգենաւ շինել տուած
է, որք ծովեղերքն հրդեհ պատա-
հած ժամանակ մարելու պիտի եր-
թան: Կըսուի թէ յիշեալ շոգենաւ-
ները շոգեշարժ մեծ ջրմուղի մը շը-
նորհիւ մինչև մէկ քառորդ հեռա-
ւորութեամբ տեղ ջրու կը հասցը-
նեն, իսկ ծովեղերն խիստ մօտ
դանուած հրդեհեալ տուները՝ ար-
ձակած ջուրներուն զօրութեամբ կըր-
նան վկայել:

Երէկ ժամ 7ին միջոցները Բերա
թաղսիմին մօտ հրդեհ պատահելով
երեք տուն այրեցաւ:

Առջի իրիկունն ալ Պէշիկթաշ փա-
շա Մահալլէսի թաղը հրդեհ պատա-
հելով երեք տուն այրեցաւ:

Շարաթ օրը Բումէլի երկաթուղ-
եայ բաժիններուն վիճակահանու-
թիւնը կատարուելով, հետեւեալ թի-
ւերը պարգև հասցեցան:

Թիւ	Փրօն	Թիւ	Փրօն
626093	300000	4213292	1000
4320738	25000	4634060	»
773635	40000	4832476	»
4096090	»	4773276	»
482109	2000	260261	»
341966	»	341382	»
399391	»	4092740	»
968244	»	4027780	»
4027776	»	4027777	»
4826014	»	848550	»
416941	4250	960123	»
4084032	»	4096088	»
4751867	»	4307134	»
460846	»	843401	»
4547534	»	373648	»
4096086	»	372390	»
968245	»	4634058	»
4826015	»	4634059	»
4832480	»	224107	»
4095228	»	4280026	»
460847	»	1055892	»
390799	»	4878595	»
393669	4090	224109	»
4418650	»	741224	»
4547534	»	943663	»

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍԶԱՄԸ ՈՍՏՈՒՄԻԷ

20 մայիս	Երկուշաբթի իրիկուն	53.36
21 »	Երեքշաբթի առաւոտ բացուեցաւ կէս օր	53.20 53.21
Սօսիթէ Ժէնէրալի բաժինը	Անգլ. իր.	7.5
« ֆոխանակութեան »	»	4.36
Կ. Պօլսի Պանքային »	»	4.32
Բրէտի Ժէնէրալ »	»	9.30
Բրէտի Օսթրո-թիւրք »	»	—

Երկաթուղաց հին նոր	Ֆր.	114
Փոխ. 1863	»	88
» 1865	»	341
» 1869	»	342
» 1872	»	280
Փոխ. 1873	»	84
Թրամուէյ	Օսմ. իր	5.70

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ
47 ՄԱՅԻՍ

Անգլ. իր	Գրքուք	141.
Նաթ. ա. ոսկի	»	87 35
Բաթ. ա. ոսկի	»	90 10
Գըրմից	»	51, 20
Հինգ Գրանք	»	—
Հինգից	»	405 40
Պիլինձ	»	424 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Երէկ իրիկուն Բ. Դռնէն գիր և
կաւ. ի Պատրիարքարան թէ վեհ.
Սուլթանը բարեհաճեր է հրամայել
որ Հայոց նորընտիր Ս. Պատրիարքն
յառաջիկայ շաբաթ օրը ժամ երե-
քին Ն. Կ. վեհախառութեան ներ-
կայանայ:

Կիրակի օրը Հոգեգալտեան տօ-
նին առթիւ Ամեն. Ս. Պատրիարքը
Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին
հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց,
և այս առթիւ իմաստալից քարոզ
մ'ալ տալով թաղին ժողովուրդը հո-
գեւորապէս միաթարեց:

Երէկ առաւօտ, Բերայէն Գում-
գալու վերադարձած ժամանակ Ն.
Սրբազնութիւնը Պատրիարքական Գեր-
փոխնորդ հօր հետ Ագապեան վար-
ժարանին այցելութիւն տուաւ, և ա-
մեն բան մանրամասնաբար աչքէ ան-
ցունելով, աշակերտութեան յառա-
ջադիմութեանը վրայ գոհ եղաւ:

Յետոյ Գումգալու Մայր դըպ-
րոցին և Լուսաւորչեան աղջկանց վար-
ժարանին այցելութիւն ըրաւ և ա-
շակերտաց ու աշակերտութեանց ուս-
մանց վիճակը մանրամասնաբար քն-
նելով գոհութիւն յայտնեց և ուսում
նախընտրութեան ու Զանախութեան
յորդորներ տուաւ:

Պատրիարքական այս օրինակ այ-
ցելութիւններն օգտակար են միշտ.
վասն զի ոչ միայն վարժարանաց տես-
չութիւններն ու ներքին պաշտօն-
եայներն զգուշութեան մէջ կը պա-
հեն, այլ և աշակերտաց ալ աշխա-
տասիրութեան քաջալեր են:

... Խմբագիր.

Կը խնդրեմք ձեր ազգասիրու-
թեանէն որ Ղալաթիոյ թաղեցւոցս
կողմանէ Գաղ. ժողովոյ տրուած հե-
տեւալ ընդարձակութեան պատ-
ւական լրագրոյդ միջոցաւ հրատա-
րակելու բարեհաճէք՝ հանդերձ ձեր
խոհուն խորհրդածութեամբք:

Ամենապատիւ Ս. Հայր և Մեծապատիւ
տեառը Կեդր. վարչութեան Ազգ. Գաղ.
ժողովոյ:

Ղալաթիոյ թաղեցւոցս իրաւանց բըւ-
նարարան խնդիրն՝ ըստ որումս պատ-
կառելի ժողովոյդ Մասնաժողովոյ մը յանձ-
նուեցաւ, որպէս զի այն հանրական
խնդրոյն վաղընդ փոյթ կարգադրութիւն
մի ընէ. բայց ցաւօք իր պարտաւորմը
ըսել թէ, մասնաժողովը այլ և այլ պատ-
ճառանքներով մինչև ցարդ զմեզ սպա-
սեցնելէ զինի տակաւին որոշում մի տը-
ւած չէ:

Արդ, Ս. Հայր և Մեծապատիւ Տեառը,
Ղալաթիոյ թաղեցւոցս աշխարհածանօթ
խնդիրը այն երրորդ բողոքաբանով դարձ-
եալ պատկառելի տեսնելը կը ներկայա-
ցնենք, և կը խնդրեմք, յանուն Սահ-
մանագրութեան, յանուն թաղեցւոցս
անկապտելի իրաւանց, որ ըստ օրինի որո-
շելու շնորհ ընէք, ապա թէ ոչ յայտնէք
մեզ թէ՛ Ղալաթիոյ ժողովուրդը սահմա-
նադրական իրաւունքէ զուրկ է, և կամ
չայ չէ:

Ստանալով ձեր արդարադատ որոշման,
15 մայիս 1874 Միամբ յարգանք
Ղալաթիոյ Ղալաթիոյ Թաղեցւոց

Յանուն Սահմանագրութեան ներ-
կայացած արդար բողոքի մը վրայ
մեր կողմանէ խորհրդածութիւնը
նեն յաւերդ կը համարինք:

Եթէ Սահմանագրութիւնը մեռ-
եալ տառ չէ, եթէ Գաղ. ժողովը Սահ-
մանագրութեան օրէնքը կը յարգէ
և անոր տրամադրութեանց համե-
մատ շարժիլ կուզէ, Ղալաթիոյ թա-
ղեցւոյ խնդիրը Սահմանագրութեամբ
լուծուած է. բացառութիւն, մեկնու-
թիւն, քաջքնուք չընդունիր երբեք:
Հետեւաբար աշխարհի բոլոր մասնա-
ժողովները չեն կրնար Սահմանագ-
րութեան տրամադրածէն դուրս
դարձուած մը տալ այս խնդրոյն. և
եթէ ասիկց առաջ տրուած է, բա-
ցարձակ ապօրինութիւն դորձուած է:

Նորընտիր Ս. Պատրիարքը, որ
դեռ անցեալ շաբթու Սահմանագ-
րութեան անթերի գործադրութեա-
նը հսկելու ուղիւ ըրաւ, անշուշտ չը
պիտի ներէ որ այս և ուրիշ ապօրի-
նութիւնք շարունակեն աղդին մէջ,
մանաւանդ այնպիսի անձանց ձեռքօք,
որք Սահմանագրութեան ջերմ պաշտ-
պան ձեւանալով՝ անոր հիմնական տը-
րամադրութիւններն իսկ լուծելու
կը յանդ գնին:

Ռուսիոյ Հայ վարժարանաց խնդ-
րոյն առթիւ քանի մը տղէտ լրագ-
րաց տպագրման բացառականութիւն
ներուն խիստ արժանաւոր պատաս-
խան մ'է հետեւեալը, որ իզմիրի Ա-
րեւելեան Մամուլ վերջին թուոյն մէջ
կը տեսնենք:

ԱՊՈՒՇՆԵՐ

Երանանորէ Ներսէս կաթողիկո-
սի մահուանէ ետքն՝ աւելի զգալի կեր-
պով երեւան ելաւ այն վտանգն՝ որով
մեծ տէրութեան մը քաղաքականու-
թիւնը կ'ապառնար Լիւթիանայ Աթո-
ւոյն ինքնօրինութեան և հայոց կը-
րօնի և աղգայնութեան դէմ: Այ-
նուհետեւ հետզհետէ միտքերն ար-
թընցան, խոհական գրիչներ լրագիր-
ներու մէջ, ճարտասան լեզուներ ժո-
ղովներու մէջ, աղգային գործոց հը-
մուտ գլուխներ յատուկ տետրակ-
ներու մէջ վտանգի զանգալը դար-
կին, և մէկ կողմէն Պաշտօնէին, միւս
կողմէն դաս մ'օտարամիլ եկեղեցակա-
նաց ստրկամիտ ձկտումներն, մտաւն-
տու և շքամիլ շարժումներն ի քնին
առնելով՝ մատնանիլ ցոյց տուին թէ
ուստի՞ են աղգութեան քանդիչ որոմ
ները, ո՛ւր՝ դարմաններն. և աղդին
ուշագրութիւնը Մայր Աթոռոյ ող-
բալի վիճակին վրայ դարձնել ուղե-
ցին, բայց այն ատենէն սկսեալ խը-
մը պաշտօնաւոր և անպաշտօն վարձ-
եալ անձինք՝ Բողոք, Էքզիստենցիալ, Է-
քզիստենցիալ-Էքզիստենցիալ, Էք-
զիստենցիալ-Էքզիստենցիալ և եղած առա-
ջարկութիւնները ցնորք, շինովի պատ-
մութիւններ, անհիմն երկիւղի հե-
տեւեք սեպեցին, և հարածելով հա-
լածեցին դրչով և գործով այն հե-
ռատեան մարդիկը:

Արդ՝ այժմ որ Ռուսիոյ կառա-
վարութիւնը նոր անօրէնութեամբ
մը Հայ վարժարաններն իր անմիջա-
կան տեսչութեան ներքեւ կուղէ առ-
նուլ թէ և անուղղակի արդէն առած
էր, այժմ որ անդունդին ծայրն ենք
հասած, քանի մ'ապառնալիքներ
և իրենց համախոհները նոր կարթըն-
նան, ասոր անոր աղգասիրութիւն
կը ծախեն և կը պօսան. չինչ է այս,
Հայ վարժարանաց մասին տրուած
օրէնքը մեր եկեղեցւոյ և աղգու-
թեան կործանումն է, մահն է: Ա-
յոյններ, դուք, դուք էիք որ Պա-
շտօնէի զովեստներ կը շուայէիք,
և Ռուսիարեակ Հայոց վիճակը նա-
խանձելի վիճակ կը դրանէիք. դուք

էր, որ ձեր երեսակները թողնուի և ազատութեամբ դուրս գալու որ Մայր Աթոռն, եկեղեցին և ազգութիւնը ճշտող ձեռքն առնել ևս ծանրանայ մեր վրայ, և այժմ երեսուներեք ըսելով մեզի թէ «ինչո՞ւ համար չէք խօսիր և չէք դուրս ելն օրէնքին դէմ»: Բայց մեր պատասխանը ձեզի տարիներջնաւ թողնուած ենք, ապաւնենք . . . : Ս. Ս.

Տիկինսի Մշակ շարժաթերթին մայիս 9 թուոյն մէջ հրատարակուած հետեւեալ ազօրինութիւնները կը յուսանք թէ վեհ. Ս. Մ. խմբագրութիւնը աչքէն չեն վրելիր :

« Ս . . . քաղաքի քահանան մի հանգուցեալ թաղերուց յետոյ, չէ բաւականանում իրան առաջարկուած 50 ռուբլ փողով, այլ սկսում է առուտուր անել: Դրան տալիս են 75 Ր. քայց նա կրկին պահանջում է որ բաւարարական գումարի վրայ աւելցնեն 50 ռուբլ ասելով թէ շատ պարտքեր ունի . . . »

« Պարսկաստանի թաւրիզ քաղաքի քահանաներից մինը՝ կամենալով ժողովուրդը յորդորել դէպի ապաշխարութիւն, Ս. Հայդուրգութեան խորհուրդը բացատրում է այսպիսի խօսքերով: «Սիրելի ժողովուրդ, դուք որ կաք, ժանդատած կաթնայինք, սուրբ հայդուրգութիւնը կայսերին նրման մի բան է, նրանով պէտք է ձեզ կրկնէք, որ մաքուր և սրբութիւն»

Երեսուցէմայ Սիւն ամառքին ապրիլի թուոյն մէջ հետեւեալ կը խորհանք :

Ամայոյ մէջ Չուսկուցի Յակոբ անուն կախաղ անձ մի եկաւ այս տեղ և լուր տուաւ որ «Բաւաստան հոգի ուխտաւոր կուգան. նոքա կէս ճանապարհին վերայ հանգստանալու համար դադարեցան եւ միայն առաւարակների կայ լուր տուաւ: Պատմեց նա թէ թաթարներն օրի չափակայ որ ճանապարհ ելան և ձմեռան սաստիկութեան առթիւ մեծամեծ նեղութիւններ կը բաժնան և կորուստներու հանդիպած են: Մինչև իսկ Ս. Պատրիարք Հօր ներկայութեան խօսեցաւ այս ամենը առանց խղճելու: Միաբանութիւնը ցաւօք սրտի լսեց և կարեկցելով փութաց պատրաստութիւններ տեսնել որպէս զի եկողները հանգստանան: Երբ բաւական ուշացան, համարելով թէ երեկոյն կուգան, յատուկ քառասուն հոգւոյ համար կերակուր ևս պատրաստուեցաւ: Բայց ժամանակն անցաւ, եկող չը կար. այս խաբեբան ալ արդէն ետինգուան դէմ թեւը նշան ընել տալով կծիկը դրած էր: Վերջապէս մինչև դիւեր տակաւին կը պատուէր որ պիտի գան, բայց մինչ ցարգ չիւք ոք, չիւք ուրեք: Հիմա միայն սա չեմք դիտել թէ արդեօք այդ ստախոսը վանքին այսչափ սրամաշուք, հոգ, մտաւորականութեան պատճառներով և ասանկ նեղ ժամանակ ունայն տեղը այսքան ծախք ընել տալովը ինքն ինչ շահեցաւ, մի թէ դիւստական պարծանքն ու խնդրութիւնը շահ պիտի համարի. ա՜մ թէ մարդկութեան որ իւր մէջ այսպիսի անդամներ կը ստուգանէ:

ՊԱՅՄԱՆ Ի ՆՊԱՅՄԱՆ Ս. ՀՈՒՍԻՍԻՍԵԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆՈՒՆ ԶԱՌԻՌՈՒՆՈՅ
Դերակայ ամայոյ 23ին դեղեցիկ և նախանձիկ անսարան մը տեղի ունեցաւ ի Ս. Հոսիսիսեան վարժարանն: Առհը դարձնելով դարձարուած էր դէմ յայնչ իման Ս. Հոսիսիսեան կողմէն ստակերն և անոր մօտ վարժարանի հիմնադիր մեծաւ

չուք Տիկին Կոնստանդինա անուն հարեարարուհւոյն կենդանադիրը կը փայլէին, ամենուն ունի ու օրհնութիւնը դրաւելով, երկու կողմը կեցեր էին դաստիարակներու հիւր. երեք սեղան՝ որոյ վերայ զանազան ընտիր բանուածներ, ձեռնադրներ և տեսակ տեսակ տաքիւներ կային, բռնած էին սրահին դիմացի և երկու կողմը: Այն սեղաններուն առջև կ'երևէին Անուարիայ Տիկինայք Տաշիսեան, Մաքսուտեան, Տէմէեան, աշակերտներով իրենց շնորհալի աղջկունքն ու այլ օրհնողներ: Ինչ դործ ունէին այս աղջկուհիները անձինք նոյն վարժարանի սրահին մէջ: Առաքինական պաշտօն մը, ուսումնասիրական նպատակ մ'ունէին որ մարդկային ամեն փառացի ձեռնարկներէ դէր ի վեր է, որ մարդկային ամեն հաճոյքէ և վայելքէ մեծ է, այսինքն այն ձեռնադրներն, զոր իրենց խնամքը հըսկողութեամբ և պաշտպանութեամբ յառաջ բերել էին ի նպատակարար աշակերտուհեաց, կ'աշխատէին առատաբեր կանանց և արանց, որ արդէն տրուած աղջկուհիներէն միայն վարժարանը կը զիւնէին ոչ այնչափ անգիւտ բաներ ծախուած առած լինելու, որչափ իրենց բարեւ սիրութեան և ուսումնասիրութեան հարկը ինչպէս ինչ նուիրելու համար: Արդարեւ անոնք զովեւեղ արժանի են այս խորհուրդն յաջող Տիկին Յ. Տաշիսեան և զայն ի դործ դնելու համար քանի մ'ամսէ ի վեր նոյն եռանդով շանաղի դըռնուց Տիկին Գ. Մաքսուտեան և Տիկին Ս. Տէմէեան, և ամեն անոնք որ չէ թէ ունանց պիտ խօսքով՝ այլ իրենց ներկայութեամբ և արդեամբ նպատասխանող եղան դործին յաղորդութեան և ցոյց տալին որ ձմարիտ հայուհիներ են և Ս. Հոսիսիսեան զպարտի յառաջադիւնութեան նախանձախղիւր: Զենք մոռնար նաև յիշելու փառքական ժողովոյ տեսնապետ Մեծ. Գ. Տաշիսեան, Ս. Տէմէեան, Սեդուր Մաքսուտեան և Կ. Սուլթանեան էֆէնդիներն: Երբ այս քաղաքացիական ձեռնարկութեան մէջ աղնիւ խնամակալ Տիկինանց հետ դործունէութեան մասին կը մըցէին:

Արդեւքը պատկէց լուրի այս շախմատութիւնն, և նոյն օրուան պաղարէն վեր ի վերայ 17-18 հազար զորք զոյսցաւ: Արդեւքը հազար հազար զորք զոյսցաւ: զանքն պիտի լինէր անշուշտ՝ եթէ ոչ միայն իբրեւ նոյն վարժարանի տեսուչ, այլ իբրեւ աղջկային անհատ մեր շնորհակալքին յայտնենք ամեն օտար և հոյազգի բարեսիրաց, որ աղջկային խորութիւն և ներքին կուսակցութեան ոչ ի բաց թողով այս բարեգործական ձեռնարկութեան իրապէս ձեռնուած եղան և ձմարիտ քըրիտոնէի և հայրենասիրի պարտք մը կատարեցին:

Կենք կ'փախդէինք և միանգամայն կ'ազգէնք որ խնամակալուհի Տիկինայք շնորհ ընեն շարունակել իրենց պաշտպանութիւնը ի Տիկինայք Ս. Հոսիսիսեան վարժարանի վրայ, մնայուն հսկող մարմին մը կազմեն օգնականներ առնելով, և հետզհետէ իրենց խնամքը հանդանակելի դրամով դրամագլուխ մը զոյսցնեն և քանի մ'ուսումնասիրան պիտոյնց հոգ տանին: Թուստից ենք որ մեր այս առաջարկութիւնը նկատողութեան կ'առնուի աղջկային վարժութեան կողմէ և պարտ ու պատշաճը կ'տնօրինուի:

Արեւելեան Մահալ .

. . . Խմբագիր Մասիս լրագրոյ. Երբիսկեալը՝ սրտիս անդամաց. րելի զգացմանց հաւաքածոյ մ'է, եթէ յօժարելք՝ ընդունեցէք զայն ձեր մօտաւոր թերթին մէկ երկու էջերուն մէջ, որ ուրիշ անգամ ևս ասպնջականած են նմանօրինակ հաւաքածոյս և զիս քաջաբերած: 16 մայիս 1875 Միամշնորհապարտ Օրթագրիւղ Տ. Սէֆեան

ԱՌ ՀԱՐՈՒՆՆ ՎԱՍԱԶԱՐԱՆ
ՏԻԿԻՆՆ ՎԵՐԳԻՆՆԵ ՅԱԿՈԲԵԱՆ
Կուսան մը և պատկեր շնորհաց Վարդանանի և վարդ բուրբէր:

Սե. սե. ծաւի աչքեր նոյն
Աստղուհը էին լուսահերո:
Եւ ինչպէս որ ամառածա ծով
Առջի փայլուն զիւրեղան
Լուսինն յառած դէտտին՝ ըսի
Թէ՛ Երջարիկը զըւարթն այն,
Այնպէս և սա . . . սա՛ լուսինը
Ձը միմեկու իղձ կուտար,
Զի յըզլտ էր նա լացերու,
Ծիծաղ՝ երգոյ տրտմալար:
Մատաղատի ո՛հ այն կուսան
Արդեօք մին ի նիւթիւնց,
Որ զառասպելի ճշմարտել
Նրեք էր հրաշալից:
Կամ Ապոլոն ետ ըզգործին
Առնա՛ դուստն քաղցրաստ,
Որ ի դաշնակ արթընցէ
Զիրական ձայն սիրահոս:
Կամ ինչ, արդեօք նա աշխարհի
Հաւատացնէ՛ր եկեր էր
Իւր լուսաթիւղ շնորհացն ի փայլ՝
Թէ՛ կան յերկին հրեշտակներ . . .
Բայց հրեշտակի կեանք չունեցա՛ր
Շնորհքը անհուն Վերդինէ՛ր,
Ուրեմն անոնց՝ որքեղ նմանին՝
Արեւն աշխարհի վրայ ինչ:

Սպասեցի՛ր, ո՛վ հարսնդ դու,
Որ քու անբիծ ճակատուն
Այն ինչ հիւսնէս պսակ՝ նարոտ՝
Որ քու կեանքդ խղես դուռն . . .
Ինչ, Վերդինէ՛ր, ալ չե՛ս տեսնար
Քաղել սիրոյդ ծաղիկները,
Կը թօթախես ծողովածներդ ալ՝
Ձը կապած փունջն առջի դուռ:
Կը թափա դու՝ աշնան տերեւ,
Դու որ Աշնան ի սաղարթ
Մշտադալար ընծիւղելով՝
Գարնանատիւն էիր դարդ . . .
Ալ չե՛ս ուզեր որ վտառորք
Իւր երգոյդ անուշիկ
Լափո՛րի առնուն՝ ամբելով
Սրտի վերքեր և թաղիծ:

Ո՛հ, հայր և թէ թեւեր առած
Սիրոյ յերկին թռչելու,
Վա՛հ, ինչ սուր նետ՝ որ սըրացաւ
Քեզ վրասոր ձգելու:
Այսչա՛րի կանուխ՝ ո՛վ Վերդինէ՛ր
Սիրոյ ծովուն անցաւոր՝
Գործանքներէ պաշարուելով
Խորատու ի վիճ խոր:

Եւ այն ամանց դաւարաւոր
Ուր բայն լինէր կերթայր՝
Տեսքը աչքիդ անհետացա՛ւ,
Ծով ծածկեց քեզ անյարիր:
Բայց դու մոռցա՛ր որ սիրական
Փեսայդ ըզբեղ հարս տեսաւ . . .
Ոսկի թեւերդ և յայս չուրդ
Պիտի կապեն հիւսակաւ:
Եւ ինչ կընես, դու յայս նըւագ
Պիտի երթոս հարս օրո՛ւ:
Որո՞ւ դուրիդ ո՛հ պիտի հըպես
Անհուն աղբամալ սիրարկու:

Եւ գայս նըւագ պիտի ցանկաս
Որ զքեզ աճենէ՛ր յարդարեն՝
Խուսկս անուշիկ ծաւաղելով,
Որ գէթ՝ ինչ քոս էր՝ հոսակ ըսն . . .
Այդչա՛րի էր քաղցր՝ ո՛վ հարսնդ դու՝
Սիրոյ այդ դարձար ընակիլ,
Ուր երկու սիրտ՝ երկու հոգի՝
Անհուն թևօք առաւունք:

Անմահութեան այն Եղիսին
Թուանալորեց քեզ պտուղ
Քամի տալով քեզ՝ անխիթ
Արեան բաժակն յորդարուղի:
Եւ կամ հանգոյն Եղիսին թեւ
Զանթն աղետից բացի՛ր
Կարծելով թէ քեզ Պանդորա
Բարեք բերէր լիակիր . . .
Վա՛հ, Վերդինէ՛ր, զդաշնի՛ր թէ
Երկունք էին գերեզման
Եւ երակայք թաղուած էր հոն՝
Խեղճ, չընծած մեռաւ այն:
Ա՛յս զգալով անմահ հոգիդ
Չաւկին ի սէր թոխս առեալ՝
Քե՛զ ալ շիրմն ընտրել տուաւ՝
Մայր՝ որդի՝ հոն գէթ ըլլաւ . . .

Բայց քու աղնիւ ամառներդ
Խալա՛ւ թողի՛ր Վերդինէ՛ր,
Նա մէկ օրորք չըլլեց,
Նա քու որդիդ ո՛ւր տեսնէ՞
Երբ նա լեզի իւր այս վտուղ
Սիրոյ ձայն մը քեզ ուղղէ՛ր,
Ղոնէ հոգին քո երկնապաշտ
Ժըպիւ մ'երեսն չը շնորհէ՛ . . .

Հաղա՛ր եղուկ քեզ՝ Վերդինէ՛ր՝
Թէ սարիւ դեռ կուգէ՛ր
Թէ կ'զգայիր դաւակ սիրել՝
Հրճուիլ անով սիրալիր:
Եւ վա՛հ՝ այսօր քու փեսայիդ
Մնաց միայն քեզ յիշել՝
Շիրմիդ վերայ ստուերացած
Սիրոյ պատկերը՝ տեսնել:
Եւ այս դարնան սոխակներու
Գայլայրիկով երազել՝
Թէ մանկիկդ է՝ որ ճըւճըւայ,
Կուգէ՛ր իւր հայրը տեսնել . . .
Եւ քաղցրաւունք երբ հոգիկ մը
այցելել գայ ճակատուն,
պիտի խորհի թէ մանկիկիդ
Կրցա՛ր համբոյր մը տալ դուռն:
Եւ գառնարած հոգիին ի սայլ՝
Պիտի կարծէ՛ լսել քեզ՝
Որ մանկիկդ յորրան չիւրմի
Դըրած՝ երգով կ'որոնես . . .
Եւ ի հրապոյր անձկալարօտ
Սթախելով քու փեսայն՝
Պիտի ըսէ՛ր նա հրեշտակ մ'էր,
Զէր յերկրէ՛ր շոյտ թոռաւ այն . . .
Օրթագրիւղ Տ. Ս. Սէֆեան

Ե. Չ. Գ.

Տոմարէն, Հայերէն, Գաղղ. լեզուաց
և Տոմարակալութեան հիմուն երկ
տոտարդ մը կը փափաքի հայ փաճա
ւականի քով զբաղու թեան մօտել:
Ուղղը լրագրոյ ցրուիչն կրնայ
տեղեկութիւն ստանալ:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Օրթագրիւղ Զինճրիլի դուռն փո
ղոյը 700 կանգուն դետին մը կ'ալ
ծախու:
Ուղղը Օրթագրիւղի Միւրտար Սան
տաճհան Յակոբ աղային հետ պէտք
է խօսիլ:

Ի Լ Ա Ն

Թօթխանէյի ամիրէյէ լուղումի օ
լան 7500 քանիտար փօք քեօմիւրի ին
կիլթէրատէ, Եօթըայրտէ Լօմօր
ֆապրիկաւանըն պիրիւնի տէրէճէտէ
մալի օլմագ ին ֆապրիկայի մէզքիւ
րըն պիրիւնի տէրէճէ մալի օլուղը
նա տայր շէհատէթնամէ իպրագ դը
լընմագ շարթի իրէ միւնաքատայէ դօ
նըրաճաղը մագաւտանմէ իլան օլու
նան քօք քեօմիւրիւնի պէհէր քան
թարը 40 դրուչէ թալիպի լագէրնտէ
օլուպ, դարարը դաթիսի Մայիսի Րու
մինն 23ինճի բէնճէմալի կիւնիւ ին
րա օլունաճաղը կիպի, էլպիսէ ան
պարիւնէ միւ պայեսա օլունաճագ իբ
պին պէշ երկը արչուն քօլու լաճիւրա
կէօր չուհաւընն պէհէր արչունը 32
դրուչէ օլուրագ թալիպի էօհատէնտէ
օլուպ, դարարը դաթիսի քէզալիք
եէվմի մէզքիւրտէ ինրա օլունաճա
ղընտան, իթա իթմէյէ թալիպ օլուն
էրին եէվմի մէզքիւրտէ Տարը Ծու
րայի տաքէրիյէ կէլմէլէրի:
20 մայիս 1874 Պապը Սէրաքէրի

Ասաքիրի Շահանէ Նանը աղիւր ի
տարէսի տէյրմանլէրնտէ մէվճուտ
Ֆիրու իթ օլունաճագ օլան երկը էլլի
պին գըլէ քէվէյին պէհէր քըլէսի
17 վարայէ օլուրագ թալիպի էօհատէ
սինտէ օլուպ, մայիսը Րումիւնն 23ինճի
բէնճէմալի կիւնիւ դարարը դաթիսի
ինրա օլունաճագ ֆիրու իթ օլունաճա
ղընտան վէ պէտէլինէ նիւմալիյէ խա
ղինէսի տէրկիսի տալիս քապուլ օլուն
նաճաղընտան, իշթիլիւր թալիպ
օլանլէրն եէվմի մէզքիւրտէ Տարի
Ծուրայի տաքէրիյէ կէլմէլէրի:
20 մայիս 1874 Պապը Սէրաքէրի

Ասաքիրի Շահանէ Շօյիւր ան
պարը իչին լուղումի օլուպ միւպայ
եա օլունաճագ օլան 30000 քիլէ շա
լիւ ճէսթէ ճէսթէ թէպիւմ օլունա
լագ տօղսան ոհնէի Րումիլէսի հաղի
րանը նիհայէթինտէ իթմամ օլուն
մագ վէ պէհատը մագպուղ վիւրու
տինտէ պէլ վէհէր բէշին սիմ մէհի

տիկն երկրի պիւրէր զրուշա իմ օ-
լունմագ իւզէրէ պէհէր քիւնսի երի-
մի զրուշա օլարագ թալիպի էօհաէ-
սինաէ օլարագ, իշպու մայիսը բուսի-
նին երկրի քիւնսի չէարշէմպի հիւ-
նիւ գարարը գալիսի վերիէնէ ին-
տէնի իմ Իմէյէ թալիպ օլունմագը
եւէվմի մէջըբարտէ Տարի Շուրայի տա-
քէրիէ կէլմէլէրի:

15 մայիս 1874 Պապը Սէրապէրի

Այս լրագրի շարքը երեք տնգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ-
թի եւ շաբաթ օրերը, բաժանորդագրու-
թեան տեղերն են Կ. Պօլիս Զինկի խան
վերի Խարիթ թիւ 15 Մաթիսի խմբագրատուն-
ի մէջ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց աննախնիրը:

ԻՋՄԻՐ. Ստեփան աղա Տէտէեան.
ԿԻՎՈՄԻՏԻԱ. Խոսրով էֆ. Լալիճեան.
ՊՐՈԽԱ. Ստեփան աղա Թանկէրեան.
ԹԵԳԻՐՍԱԿ. Յովսէփ աղա Ուղուն-
արդեան:

ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Լեւոնեան
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Կարապետի Զա-
քարեան:

ՄԱԻՇ. Մկրտիչ աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.

ՖՈՐՏԱՆ. Մկրտիչ աղա Սաճեան.
ՀԱԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մար-
գարեան:

ԵՐԶՆԿԱՅ. Թադէոս աղա Բաղրա-
տունի:
ՍԻՎԵՐՆԻՍԱՐ. Կարապետ աղա Վար-
դանեան:

ՌԵՐԻՇ քաղաքներէ ստորագրուի ու-
ղողներն այս տեղերէն մէկուն հետ կրնան
լիզի ապրի:

ԱՅՈՒՄ ԽԵՐՄԿՆՈՂ ԶՈՒՐ
ԵՒ ՓՈՇԻ
J.V. BONN
ԿԱՍՏՐՈՒԿԱՌՈՒԹԵԱՆ
ՏՕՔԹՕՐ Ժ. Վ. ՊՕՆՆ ԲԵՐԼԻՆ
Այս ջուրն եւ վոշին ուրիշ
ամեն ջուրերէ եւ վոշիններէ գե-
րազանց է իւր անուշ հոտով եւ
օգտակար յատկութեամբ, եւ
անոնց ամենէն ալ հարկւրին 40
վար գնով կը ծախուի:

Ամեն գլխաւոր գեղարվածա-
ւաց եւ անուշահոտութիւնը վա-
ճառողաց քով կը գտնուի:

ԻՄՐԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆԿԻ ԽԱՆ

ԴԵՂԱԳՐՈՒԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՅ ՓԱՐԻՋԻ
ԱՐԾԱԹԷ ՇԻՄԱԴՐԱՄ
Է. ԿԻՒՅՕ
ԿՈՒՊՐ (ԳԱԹՐԱՆ) ԿԻՒՅՕԻ
ՀԵՂՈՒԿ ԹԱՆՁՐԱՅՆԱԼ

Պ. Կիւյօ յաջորդեցաւ Կուպրին անտանելի դառնու-
թիւնն ու կծուութիւնն անհետացնելու եւ խիստ դիւրա-
ւայ ընելու: Այս յաջող զիւտէն օգուտ քաղելով՝ Կուպրի
թանձր հեղուկ մը կը շինէ, որ փոքր քանակութեան մէջ
բազում ներդրած սկզբունք կը պարունակէ: Ուստի Կիւ-
յօի Կուպրը հասարակ կարգաւորին ամեն օգուտներն ունի
առանց անպատեհութիւններն ունենալու: Բաւական է
սուրճի դեղալ մը լցնել դառալի մը ջուրի մէջ, եւ դեղա-
լանց կարգաւոր մը ձեռք կը բերուի առանց անսիրտ հա-
մի: Այս կերպով ամեն մարդ կրնայ ինքնին կարգաւոր շի-
նել սկստը եղած միջոցին, ուղածին չափ թեթեւ կամ դո-
րաւոր, որով թէ՛ ժամանակի խնայութիւն, եւ թէ՛ վա-
րագրութեան դիւրութիւն կուենայ, եւ Կուպրի անհա-
ճող դործածութիւնէն ալ ազատ կը մնայ:

Կիւյօի Կուպրը, հարբուիս, թորագալից հիւանդու-
թեան (սիֆիլիս), հազի եւ ուրիշ լանջոյն հիւանդութեանց
մէջ ուրիշ ամեն հեղուկ դեղերու տեղն օգտակարապէս կը
բռնէ: Համաճարակ հիւանդութեանց ժամանակ ալ քօլե-
ռայի, փորլուծութեան, տենդի եւ ուրիշ այս տեսակ հիւ-
ւանդութեանց դէմ շատ օգտակար ըլլալը մասնաւորապէս
վկայեալ է բժիշկներէն:

Վերջապէս մեծ յաջողութեամբ կը դործածուի
ԹՐՈՒՍԱԿԱՆ ՀԻՒՄԱՆԻՏԱՐԻԱՆ
ԹՐՈՒՍԻՍԻ
ՀԱՐՈՒԹԻՒ
ՀԱՅԻ
ԿՈՒՐՄԻ ԳՐԳՈՒԹԵԱՆ
ՓՈՂԻ ՀԻՒՄԱՆԻՏԱՐԻԱՆ
ՓԱՄՓՈՒՇԻ ԳՐԳՈՒԹԵԱՆ դէմ:

Ամենէն առաջ Պրիւսիոյ եւ յետոյ ամեն տեղ եղած
փորձերէ հաստատուած է որ Կուպրը թորախտ եւ թորա-
ռալից հիւանդութիւն ունեցողներուն խիստ օգտակար է:
Թորախտը չրճելու, բայց հիւանդներուն մեծ սիրտանք եւ
հանդուրժելի կուտայ: զանոնք հոգեւոր հազը կը
դադրեցնէ, եւ շատ անգամ հիւանդներուն կեանքը կեր-
կընցընէ: Այսչափով միայն բաւական է հիւանդաց ուշադ-
րութեան արժանի ընելու: այս դեղը: Բայց պէտք է լաւ
համարուի: որ այս դեղը մասնաւոր հիւանդութեան նոր
սկսած ժամանակը պէտք է դործածել: Թեթեւ հարբուիս
մը կրնայ թորագալից հիւանդութեան վտանգը այս պատ-
ճառաւ, մէկը հազալ սկսելուն պէս այս դեղը պէտք է
առնու: որովս դիւրալ օգուտ քաղէ: Կուպրի տեղադրու-
թիւնն ունեցողներէն շատերը կրծախտ ունենալին չեն
զիտեր եւ շատ անգամ ինքզինքնին հարբուիս կամ թեթեւ
թորախտով անհետացնելու յաջողութեամբ կը շինուի:

Թորագալը ունեցած կը կարծեն երբոր թորախտն արդէն
սկսած է:

Փարիզի Եօթն հիւանդանոցաց, ինչպէս նաեւ Պրիւ-
սիոյ, Վիէնայի եւ Լիւզոնի մէջ Կիւյօի Կուպրով փորձեր
եղան եւ խիստ յաջող եղան:

Ահաւասիկ բժշկական Սթալէլ լրագրին մէջ Տրեթոր
Ֆիլիպսի ըրած դիտողութիւնները:

«Պրիւսիոյ մէջ Պ. Տ. . . 47 տարեկան, Եօթն տարեկ
ի վեր թորագալից հիւանդութիւն ունենալով, վերջին
ծայր տկարացած էր: Գեղերէ ձանձրացած ըլլալով, մեծ
գեղարուցութեամբ յանձն առաւ Կիւյօի Կուպրը փորձել,
Քանի մ'աւուր մէջ մարտադական զօրութիւնն անթնցաւ,
հազը քիչցաւ, եւ վեց շաբաթ դարմանէ ետեւ բոլորովին
դադրեցաւ: Երեք ամիսն ալ կատարեալապէս բժշկեցաւ: Պ.
Տ. . . մինչեւ հիմա կը գործածէ այս դեղը, եւ երբեք կընէ
որ բնաւ չսիրտի թորախտ:

Գարձեալ:

«Պ. Չ. . . 43 տարեկան, չորս տարեկ ի վեր թորախտ
եղած էր, բերնէն յաճախ եւ առատ արեւն եկած էր,
վերջապէս մահաւոր լինակի մէջ էր: Կիւյօի Կուպրը աւ-
ւելի է որ կը դործածէ, եւ հազը դրեթէ բոլորովին դադ-
րած է: Չեմ ըսեր որ այս դեղը Պ. Չ. . . ի թորախտը կա-
տարեալապէս սիրտ բժշկէ, բայց տարակոյս չկայ որ անոր
կեանքը սիրտ կրկարեցնէ:

«Պէտք է աւելցնել, որ Կիւյօի Կուպրին դործածու-
թիւնը շատ պարագայերու մէջ ուրիշ բուսական տար հե-
ղուկներ դործածելու հարկ չի ուղարկէ:

Կիւյօի Կուպրին ամեն մէկ շիւր կրնայ տասնեակու
լիտրի ջուր կարգաւոր շինել:

Ա. Չ. Դ.

Կիւյօի Կուպրին շատ ծախուի որ իւր օգտակար յատ-
կութեանց ազաւոյց մ'է, բազմաթիւ նմանողութեանց եւ
խարդախեալ բազաղութեանց առիթ տուած է, ինչպէս
որ բազմաթիւ ճարտար քիմիագործներու քննութիւններէն
հասկնալու է:

Չուզելով բարոյական պատասխանատուութիւն մը վը-
րաւ բերել, որ ինձ չվերաբերի, կը յայտնեմ թէ՛ ես մի
միայն իմ շինած բազաղութեան հարադատութիւնն ու
լաւութիւնը կ'երաշխաւորեմ: Ուստի զնոյնները պէտք է որ
շիւն վրայի կանանց պատակին եւ անոր պարանոցին վախ-
թուած երկրին վրայ հետեւ
եալ ստորագրութիւնը պահան-
ջեն:

Կը գտնուի Ռէրա եւ Կ. Պօլիս Գանդիւք եղբայր,
Վիէնայի եւ Գաւառականի դեղարանները:

ՀՐԴԵՀԻ ԳԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
NORTH BRITISH AND
MERCANTILE
INSURANCE COMPANY
ՆՕՐԹ ԳՐԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԱՆԹԻԼ
Լանքայն եւ Լոնդոնի ապահովութեան
ընկերութիւնն Անգլիա
Բաժանորդաց ընդհանուր շահութիւն 2,000,000
Վճարեալ գրանցութիւն 250,000
Պահեստի գումար հրդեհ-
հի ճիւղին գոյացեալ 596,000—846,000
1872ին հրդեհի գուտ հասցիւր 794,000

NORTHERN
ASSURANCE COMPANY
ՆՕՐԹ ԶՆՐՆ
Լանքայն եւ Լոնդոնի ապահովութեան
ընկերութիւնն Անգլիա
Բաժանորդաց ընդհանուր շահութիւն 2,000,000
Վճարեալ գրանցութիւն 100,000
Պահեստի գումար հրդեհ-
հի ճիւղին գոյացեալ 250,000—550,000
Զուտ հասցիւր 1872ի 270,000

Ստորագրեալը՝ իրենց բազմաթիւ յաճախողաց եւ այս քաղաքի ընդհանուր
հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերջիցեալ երկու ընկերութեանց մի-
ացեալ գործակալարար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին,
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գլխաւորութիւններ կը մատուցանեն:

Ապահովութեանց կարգաւորութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց
մէջ համեմատական բաժանումով, որ, եւ այսպէս ապահովութեան եւ դիւրութեան
աւելնալով ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծապէս ապահովութիւն բը-
նողներու ինքզինքն ներկայացունել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունալ ինչպէս
բերանի Վալթիկայ եւ Պօլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը եւ գա-
ւառները:

Գրեթէ ամեն մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Վալթիկայ Բէրլինի քաղաքի մօտ Կլաւսի
խան թիւ 5:

Լրագր դործակալարար
Վ. Ռ. ՍՈՒՐՆ ՍՏՐԱՆ Մ. ԲԻՒՆ

LLOYD SUISSE
ԼՈՅՏ ՍՈՒՍ
Ապահովութեան ընկերութիւնն Գաւառի Գաւառի Գաւառի Գաւառի
Գաւառի Գաւառի Գաւառի Գաւառի
Ի Վիէնայի Գաւառի Գաւառի Գաւառի Գաւառի
Կապահովէ վաճառք, գումար եւ այլն, ծովու եւ գետի վրայ երաշխական
Հիւանդութեան եւ Օտմանեան շոգենաւերանոյ եւ առաքատանաւերանոյ եւ
ցամաքի վրայ ալ երկաթուղիներով փոխադրելու վտանգաց դէմ ինչպէս
նաեւ բոսթայով ամեն կողմ զրկուած լինելու նմանակներ եւ ծրարներ:
Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
Բնահասարակ Գործակալ
ՀԵՐՄԱՆ ՀԵԼՊԵՆԿ
Ի Գաւառի Գաւառի
Գաւառի Գաւառի Գաւառի Գաւառի
ԱՂԵՔՍԱՆԳՐ ԲԵՐԼԻՆ
Պահճէ գարու:

ԼԱ ԺԻՐՈՆՏ
ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ, ԿԱՐՈՒՍԻ ԵՒ ԱՆԱՍՆՈՑ
ԿՈՏՈՐԱՆԻ ԴԵՄ
Կապահովէ, տուներ, կարաւներ, վաճառանոցներ, վաճառքներ
եւ այլն եւ այլն, մինչեւ անգամ փայտէ շէնքեր հրդեհի դէմ եւ անասնոց
կոտորածի դէմ, չարաւոր դնով եւ չահաւէտ պայմաններով թէ՛ Կ. Պօլսոյ
եւ թէ՛ Թուրքիոյ Գլխաւոր քաղաքացի մէջ: Վրաս մը պատահած ժամանակ,
ստորագրեալն անմիջապէս կը կատարէ ճշդիւ եւ ուղղութեամբ բոլոր
յանձն առած պայմանները:
Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
Բնահասարակ Գործակալ Թուրքիոյ համար
ԱՂԵՔՍԱՆԳՐ ԲԵՐԼԻՆ Ի ՊԱՀՅԱՆ ԳԱՐՈՒ